



**ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԱՄԻՍ 2017**

**ՆԿԱՐՉԱԿԱՆ
ՄՐՅՈՒՅԹ**



Պայմանները

- ◆ մրցույթին մասնակցությունն ԱՆՎՃԱՐ է,
- ◆ կարելի է ներկայացնել մինչև 3 նկար՝ A3 ձևաչափով,
- ◆ նկարները կարող են պատրաստված լինել ցանկացած միջոցով՝ մատիտ, ջրաներկ, գուաշ, յուղաներկ և այլ,
- նկարները պետք է լինեն Ձեր հեղինակային աշխատանքները, այլ ոչ թե կրկնօրինակված կամ համացանցից բեռնված,
- նկարների հեղինակային իրավունքը փոխանցվում է ՀՀ կենտրոնական բանկին՝ դիմում-հայտում նշված համաձայնությամբ: Նկարները կարող են օգտագործվել էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով՝ կրթական, տեղեկատվական բնույթի նյութերում, ցուցադրվել տարբեր միջոցառումների ժամանակ,
- նկարների վրա պետք չէ նշել հեղինակի անունը կամ կատարել ինքնությունը բացահայտող այլ գրառումներ (տվյալները նշվում են միայն դիմում-հայտում):

ԵՐբ կհայտարարվեն արդյունքները

Հաղթողների անունները կհրապարակվեն, և մրցանակները կհանձնվեն մայիսին՝ «Իմ ֆինանսների ամիս 2017» ծրագրի փակման արարողության ժամանակ: Արդյունքների մասին կարող եք տեղեկանալ նաև www.abcfinance.am կայքից:

Թեմա

Սիրելի աղջիկներ և տղաներ, դարձե՛ք «Իմ ֆինանսների ամիս 2017» նախագծի մի մասը, մասնակցե՛ք 5-ից 12 տարեկանների համար նախատեսված նկարչական մրցույթին՝ «Որտեղից է գալիս փողը» թեմայով: Նկարե՛ք, թե ձեր պատկերացմամբ որտեղից է գալիս ձեր գրպանի փողը, ինչպես նաև այն փողը, որով կարող եք գնել հեծանիվ, խաղալիք, գրենական պարագաներ, քաղցրավենիք և այլն:

Ո՛ւմ համար
Մրցույթին կարող են մասնակցել **5-ից 12 տարեկանները**:

ԵՐբ
Աշխատանքները կընդունվեն **2017 թվականի մարտի 10-ից մայիսի 8-ը**:

Ինչպե՞ս մասնակցել

Քայլ 1.
Մասնակցության համար www.abcfinance.am կայքի «Իմ ֆինանսների ամիս 2017» **Նկարչական մրցույթ** բաժնից անհրաժեշտ է բեռնել **ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ**, ծանոթանալ դրույթներին, լրացնել ու կցել նկարներին:

Քայլ 2.
Ներկայացնել բնօրինակ նկարները և ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ ՀՀ կենտրոնական բանկի հետևյալ տարբերակներից մեկով՝

- Ուղարկել փոստային հասցեով՝ ՀՀ կենտրոնական բանկ, Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոն, Վաչագեն Սարգսյան 6, Երևան 0010, ՀՀ,
- Բերել ՀՀ կենտրոնական բանկի աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից 18:00-ը՝ նախապես Վանաձորում **010 592 715** հեռախոսահամարով:

Մրցանակներ
3 տարիքային խմբերից ժյուրին կընտրի մեկական նկար, որոնց հեղինակները կարժանանան ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հատուկ մրցանակների: Տարիքային խմբերն են՝
5-ից 7 տարեկաններ,
8-ից 10 տարեկաններ,
11-ից 12 տարեկաններ:
Լավագույն նկարները կտեղադրվեն www.abcfinance.am կայքում, սոցիալական կայքերի (Facebook, Twitter) համանուն էջերում: Կարող են լինել նաև հատուկ մրցանակներ բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսական կառույցների կողմից:



Ո՛ր դիմել հարցերի դեպքում

- ✉ consumerinfo@cba.am
- ✉ [@abcfinance_CBA](https://twitter.com/abcfinance_CBA)
- 🌐 www.abcfinance.am
- ☎ +37410592697
- 📘 [ABCFinance.am](https://www.facebook.com/ABCFinance.am)
- 🔖 #MFM2017